ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հուլիսի 18-ից 20-ը

Ռուսաստանի Դաշնություն, (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը՝

Սենիկ Ներսիսյան

2" Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մաքսային հսկողության վարչության Մաքսային գործառնությունների կազմակերպման և հսկողության բաժնի պետ

3" Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, հուլիսի 18-ից 20-ը

4" Հրավիրող կողմը՝

ԵԱՏՄ Հանձնաժողով

5" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների փորձագետների հերթական նիստին մասնակցությունը:

Փորձագետների կողմից ս/թ-ի հուլիսի 18-20-ը ընկած ժամանակահատվածում մշակվել և քննարկվել է ԵԱՏՄ շրջանակներում թվով երկու միջազգային համաձայնագրերի նախագիծ՝ ԵԱՏՄ շրջանակներում ընդհանուր տարանցման համակարգի մասին համաձայնագրի նախագիծը և Եվրասիական տնտեսական

միությունը մի կողմից և երրորդ երկրի միջև մյուս կողմից ընդհանուր տարանցման համակարգին միացման մասին համաձայնագրի նախագիծը:

6" Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում մշակվել է ԵԱՏՄ շրջանակներում ընդհանուր տարանցման համակարգի մասին համաձայնագրի նախագիծը, որով ԵԱՏՄ անդամ երկրները սահմանում են ընդհանուր տարանցման համակարգի մասին համաձայնագրի դրույթները, մասնավորապես դրա գործունեության շրջանակը, սկզբունքները, երրորդ երկրի հետ համաձայնագրով կարգավորման ենթակա հարցերի շրջանակը և կարգավորումների հիմնական սկզբունքները:

Համաձայնագրի նախագծի վերջնական շարադրանքի համաձայն՝ ԵԱՏՄ ընդհանուր տարանցման համակարգին կարող են միանալ երրորդ երկրներ, դրանցից յուրաքանչյուրի հետ առանձին համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդհանուր տարանցման համակարգին միանալու համար սահմանված են հետևյալ հիմնական կանոնները՝ պետք է կիրառվի ԵԱՏՄ շրջանակներում գործող տարանցիկ հայտարարագրի ձևաթուղթը, այդպիսի հայտարարագրի լրացման կարգը, երրորդ երկրի տարածքում ներկայացված այդպիսի հայտարարագիրը կավարտվի այդպիսի երրորդ երկրի սահմանին և ԵԱՏՄ օրենսդրությանը համապատասխան՝ դրան նոր համար տրամադրելու եղանակով կվերագործարկվի ԵԱՏՄ անդամ երկիր մուտք գործելիս: Համաձայնագրի տրամադրած առավելություններից է տարանցիկ հայտարարագրի միասնական ձևաչափի կիրառումը, ինչը հնարավորություն կընձեռի այդպիսի հայտարարագիրը ներկայացնել միաժամանակ ինչպես ԵԱՏՄ անդամ երկրի, այնպես էլ երրորդ երկրի մաքսային մարմին, Եվրասիական բանկի կողմից տրամադրված մաքսային վճարների կատարման ապահովման և ԵԱՏՄ տարածքում և համակարգին միացած երրորդ երկրի տարածքում կիրառելիության ապահովումը, երրորդ երկրում տեղադրված նավիգացիոն կնիքների փոխադարձ ճանաչման և կիրառման հնարավորությունը:

Եվրասիական տնտեսական միությունը մի կողմից և երրորդ երկրի միջև մյուս կողմից ընդհանուր տարանցման համակարգին միանալու մասին համաձայնագրի նախագիծը իրենից ներկայացնում է այդպիսի համաձայնագրի տիպային օրինակ, արդեն իսկ մշակված և համաձայնեցված սկզբունքների շարադրմամբ:

7"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ տեղի ունեցել են ԵԱՏՄ Հանձնաժողովի շենքում՝ այլ երկրներից ժամանած փորձագետների և Հանձնաժողովի համապատասխան դեպարտամենտի աշխատակիցների հետ:

8" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստերի արդյունքներով որոշվել է մշակված համաձայնագրերի նախագծերը քննարկման նպատակով ուղարկել անդամ երկրների կառավարություններ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող փորձագետներին ստորագրման փաստաթղթեր չեն ներկայացվել և փորձագետների կողմից փաստաթղթեր չեն ստորագրվել:

9" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

10" Ստորագրությունը, ամսաթիվը

Ա. Հարությունյան

21.07.2022թ